ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան Անդրանիկի 13


# ՈՐՈՇՈՒՄ

05 նոյեմբերի 2018թ. թիվ 139

## ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի նոյեմբերի 30-ի թիվ 1855-Ն որոշման 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ պարբերության 25 –րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,չի առաջացնում սերվիտուտ և չի հակասում քաղաքաշինական նորմերին. որոշում եմ

1.Բավարարել Ֆրունզիկ Ավետիսյանին խնդրանքը և նրա ընտանիքին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Անդրանիկի փողոց 7-ին շենքի բն. 3 հասցեում գտնվող բնակարանին կից 2018 թ. կառուցված 72.26քմ ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել նրանց սեփականության իրավունքը:
2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի N 912 –Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի (ա) ենթակետի համաձայն 72.26քմ x 3000.0 x 0.26 = 56362.8 ՀՀ դրամ:Նույն որոշմամբ հաստատված կարգի 25 կետի (բ ) ենթակետի համաձայն սույն կետով սահմանված կառույցների զբաղեցրած հողամասերը շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին սեփականության իրավունքով փոխանցվում է անհատույց:
3.Վեր նշված /56362.8 դրամ, / գումարը պետք է մուծվի որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Պռոշյան համայնքի 900115107063 հաշվեհամարին:
4.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ...ԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

# ՈՐՈՇՈՒՄ

03 10 2018թ. թիվ 138

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լինա Սաբուցյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 29122017-07-0061 0.05հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հասցեավորել հետևյալ կերպ՝ Վանահովիտ փողոց թիվ 45 ։
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման։
3. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանին սույն որոշումն ընդունել ի գիտություն։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 3-ը
Պռոշյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

# ՈՐՈՇՈՒՄ

03 10 2018թ. թիվ 137

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաքակյան Գեորգոս-Վազկենին սեփականության իրավունքով պատկանող թիվ 2263090 0.0504հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել հետևյալ կերպ՝ Վանահովիտ փողոց թիվ 41 :
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3.Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանին սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 3-ը
Պռոշյան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբեր 2018 թվականի N 136

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԸ 24-00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածով, Պռոշյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 52-Ն որոշման և հիմք ընդունելով <<Վահագն Սահակյան >> և <<Վաղինակ Սահակյան>> անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված հայտերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Վահագն Սահակյան>> Ա/Ձ <<Պալացցո>> դիսկո ակումբին
2. <<Վաղինակ Սահակյան>> Ա/Ձ-ին <<Ֆլամինգո>> գիշերային ակումբին

համաձայն իրենց հայտում նշված ժամանակահատվածի՝ 2018թ համար տրամադրել համայնքի տարածքում ժամը 24-00-ից հետո աշխատելու, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ցուրիկ Ոզգոյանի վրա:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թ. սեպտեմբեր 25
գ.Պռոշյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբեր 2018 թվականի N 135

## <<ՎԱՀԱԳՆ ՍԱՀԱԿՅԱՆ >> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ <<ՊԱԼԱՑՑՈ>> ԴԻՍԿՈ ԱԿՈՒՄԲԻՆ ԵՎ <<ՎԱՂԻՆԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ>> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ <<ՖԼԱՄԻՆԳՈ>> ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Պռոշյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 52-Ն որոշումը, և <<Վահագն Սահակյան >> և <<Վաղինակ Սահակյան>> անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված հայտերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել <<Վահագն Սահակյան>> և <<Վաղինակ Սահակյան>> անհատ ձեռնարկատերերին տեղադրել գովազդային վահանակներ 1մ$^2$ մակերեսով Պռոշյան համայնքում Գևորգ Չաուշի փողոցի տարածքում:
2. Ձև N 1 թույլտվությունը տալ տեղական տուրքի վճարման անդորրագրի առկայության դեպքում:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Յուրիկ Ոգգոյանի վրա:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թ. սեպտեմբեր 25
գ.Պռոշյան